Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված Լևոն Լևոնյանը՝ «Նռով տղան», այսօր կդառնար 26 տարեկան

13.08.2026 16:37



Այսօր փաստաբան Կարեն Լևոնյանի որդու՝ Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված Լևոն Լևոնյանի ծննդյան օրն է: Լևոնն այսօր կդառնար 26 տարեկան:
Նա ընդամենը 40 օրվա ծառայող է եղել, երբ սկսվել է պատերազմը: Նա զոհվել է Կարմիր շուկայի հատվածում, թշնամական ԱԹՍ-ի հարվածից հետո:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, Պալատի աշխատակիցները, Փաստաբանական ակադեմիայի և Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներն այցելել են Լևոն Լևոնյանի հիշատակի պուրակ, հարգանքի տուրք մատուցել նրա հիշատակին, խնկարկել և ծաղիկներ խոնարհել նրա շիրիմին:

Նշենք, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 18.05.2021թ. թիվ 92-Ա որոշման համաձայն սահմանվել են հիշատակի օրեր փաստաբանների զոհված զավակների հիշատակը հավերժացնելու նպատակով: Համաձայն որոշման, ամեն տարի սահմանված օրերին ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը և փաստաբաններն իրենց հարգանքի տուրքը կմատուցեն զոհվածների հիշատակին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })